




«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«18» 03 2014թ.

Հաստատում եմ

Գնումների աջակցման կենտրոնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար

 Լ. Թունյան

N ԳԲԽ 07/14 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Յասոն» ՍՊԸ-ի կողմից 28.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Յասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Յասոն» ՍՊԸ-ն հայտնել է, որ 19.02.2014թ. մասնակցել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով (այսուհետ՝ Պատվիրատու) կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Հրավերի համաձայն, հայտերն անհրաժեշտ էր ներկայացնել մինչև 19.02.2014թ. ժամը 11:00-ն, միաժամանակ մասնակիցները հայտով պետք է ներկայացնեին՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 1),

բ. գնային առաջարկ (Հավելված 2):

Հրավերի պահանջի բ) կետի համաձայն՝ մասնակցի գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Վերը նշվածը հաշվի առնելով Ընկերության կողմից ներկայացվել է գնային առաջարկ, որի 3-րդ սյունակում նշված արժեքը ներառում է իր մեջ յուրաքանչյուր ապրանքատեսակի մեկ միավորի ինքնարժեքի և անուղղակի հարկերի ընդհանրականը:

Պատվիրատուի կողմից 24.02.2014թ. տեղադրվել է հայտարարություն՝ շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին: Համաձայն որոշման «Յասոն» ՍՊԸ-ն հայտարարագրված ապրանքատեսակներից 32 չափաբաժիններում ճանաչվել է հաղթող:

«Յասոն» ՍՊԸ-ն գտնում է, որ պատվիրատուի կողմից 24.02.2014թ. որոշման մեջ ներկայացված հաշվարկը թերի է և նման հաշվարկի հիման վրա չի կարող կնքվել պայմանագիր հետևյալ պատճառաբանությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի՝

- 1) հղում հրապարակված հայտարարությանը՝ ի լրումն որի տրամադրվում է հրավերը.
- 2) հայտերի պատրաստման հրահանգները.
- 3) որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը.
- 4) գնման առարկայի բնութագրերը.
- 5) հայտերի գնահատման և հաղթողի ընտրության կարգը.
- 6) պայմանագրի նախագիծը.
- 7) եթե գնումն իրականացվում է չափաբաժիններով և մասնակիցներին թույլատրվում է հայտեր ներկայացնել գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միայն մի մասի համար, ապա դրա պայմանները և կարգը.
- 8) հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը.

9) նշում այն մասին, որ առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով.

10) հայտի և պայմանագրի կատարման ապահովմանը վերաբերող պահանջները.

11) հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ ձևը, տեղը, ժամկետը և հայտի լեզուն, հայտերի վավերականության ժամկետը.

12) գնման գործընթացի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը, տեղեկություններ մասնակիցների հետ կազմակերպվելիք հանդիպումների մասին, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի քարտուղարի անունը և ազգանունը.

13) հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը.

14) տվյալ գնմանը վերաբերող՝ սույն օրենքի և իրավական այլ ակտերի դրույթներին կատարված հղումները.

15) պայմանագիր կնքելու առաջարկը ներկայացնելու պայմանները.

16) գնման գործընթացի հետ կապված գործողությունները (անգործությունը) և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը.

17) հայտը մերժելու հիմքերը.

18) պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման տարբերակը.

19) հայտի նախապատրաստման, ներկայացման, բացման և գնահատման, ինչպես նաև գնումների վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) հայտի ապահովումը.

4) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ), եթե հրավերով նախատեսված է.

5) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Վերը նշված հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ առաջարկը ներկայացվում է հայտի համապատասխան:

«Յասոն» ՍՊԸ-ն հայտնել է, որ Պատվիրատուն իր հայտի մեջ (մասնավորապես հայտի բ) կետում) նշել է «Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով», որը Ընկերությունը հաշվի առնելով ներկայացրել է գնային առաջարկ, որի 3-րդ սյունակում նշված արժեքը ներառում է իր մեջ յուրաքանչյուր ապրանքատեսակի մեկ միավորի ինքնարժեքի և անուղղակի հարկերի ընդհանրականը:

Պատվիրատուն 24.02.2014թ. որոշման մեջ հաշվարկ կատարելիս «Յասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված յուրաքանչյուր ապրանքատեսակի մեկ միավորի արժեքը ընդունել է որպես յուրաքանչյուր ապրանքատեսակի ընդհանուր թվի արժեքի գին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝

1. Պատվիրատուն, նախքան էլեկտրոնային աճուրդի անցկացումը, կատարում է հայտերի լիարժեք նախնական գնահատում՝ հրավերով սահմանված չափանիշներով:

2. Բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին միաժամանակ ուղարկվում է էլեկտրոնային ձևով նոր (վերանայված) գներ և (կամ), կոնկրետ դեպքերում, նոր (վերանայված) ոչ գնային առաջարկներ ներկայացնելու պահանջ:

3. Նման պահանջը ներառում է նաև տեղեկություններ՝ էլեկտրոնային աճուրդի բացման օրվա ու ժամի և օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալների մասին:

4. էլեկտրոնային աճուրդը կարող է կայանալ մի շարք հաջորդական փուլերով:

5. էլեկտրոնային աճուրդը սկսվում է ոչ շուտ, քան դրա մասին պահանջը ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկու օրացուցային օր անց:

6. Այն դեպքերում, երբ էլեկտրոնային աճուրդի (սակարկության) առարկա են հանդիսանում գնից բացի այլ հատկանիշներ, սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջը ներառում է նաև տեղեկություններ հետևյալի վերաբերյալ՝

1) համապատասխան մասնակցի լիարժեք գնահատման արդյունքը.

2) էլեկտրոնային աճուրդում կիրառվելիք մաթեմատիկական բանաձևը՝ ներկայացված նոր գների և (կամ) նոր ոչ գնային առաջարկների հիման վրա ավտոմատ

վերավարկանշումը որոշելու համար: Այդ մաթեմատիկական բանաձևը ներառում է հաղթող մասնակցին որոշելու համար հրավերի մեջ սահմանված չափանիշների կշիռը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 49.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվում են ոչ գնային պայմաններին համապատասխանող հայտերում ներառված գնային առաջարկների, իսկ շինարարական աշխատանքների դեպքում՝ նաև ծավալաթերթ-նախահաշիվների թվաբանական ճշտությունը: Թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով.

1) եթե առկա է անհամապատասխանություն գումարների թվային և բառային արտահայտությունների միջև, ապա հիմք է ընդունվում բառային արտահայտությունը.

2) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ՝ փոխելով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գինը.

3) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի տասնորդական գրառման մեջ ստորակետի ոչ ճիշտ տեղում դնելու կամ սխալ կլորացման արդյունք է, ապա ճշտումը կատարվում է տվյալ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գնի պահպանմամբ՝ ճշտելով միավորի գինը.

4) գնահատող հանձնաժողովը կատարված ուղղումների արդյունքների մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը ճշգրտված գնային առաջարկի մասին, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Յասոն» ՍՊԸ-ն գտնում է, որ Պատվիրատուի կողմից չի կատարվել որևէ ճշտում ինչը բերել է վերջնական արդյունքների խեղաթյուրման: Հրավերի մեջ նշված ինքնարժեք հասկացողությունը թյուրիմացաբար հիմք է հանդիսացել յուրաքանչյուր ապրանքատեսակի ընդհանուր գնի ոչ ճիշտ ձևավորմանը: Ակնհայտ է, որ եթե Պատվիրատուի կողմից կատարվեին մատնանշված պահանջները, ապա նման վրիպակ տեղի չէր

ունենա: Անտրամաքանական կլիներ Ընկերության կողմից նման առաջարկ ներկայացնելը այն դեպքում, երբ ընկերությունը կրելու էր էական վնասներ: Կատարված հաշվարկն էականորեն տարբերվում է թե շուկայում առկա գներից և թե մյուս մասնակիցների կողմից ներկայացված արժեքներից և կարող է բացատրվել միայն որպես բառախաղի արդյունք:

«Յասոն» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ եթե Պատվիրատուն կատարեր պայմանագրի գնի ընդհանուր հաշվարկ, այսինքն ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը յուրաքանչյուր ապրանքատեսակի մեկ միավորի ինքնարժեքի և անուղղակի հարկերի ընդհանրականը բազմապատկեր յուրաքանչյուր ապրանքատեսակի թվով, ապա ստացված գինը հայտի ընթացքում նույնպես լինելու էր նվազագույնը: Ընկերությունը չի հրաժարվում պայմանագիր կնքելուց, սակայն դա կարող է տեղի ունենալ վերահաշվարկի արդյունքում, քանի որ հակառակ դեպքում Ընկերությունն ունենալու է զգալի վնասներ:

«Յասոն» ՍՊԸ-ն խնդրել է կասեցնել 24.02.2014թ. Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու մասին որոշումը, «Յասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկում յուրաքանչյուր ապրանքատեսակի մեկ միավորի համար հայտարարագրված արժեքի արտադրյալը տվյալ ապրանքատեսակի ընդհանուր քանակով որպես յուրաքանչյուր ապրանքատեսակի գին հաշվարկել և դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը, այդ թվում անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Յասոն» ՍՊԸ-ն 14.03.2014թ. N 2639-Ն գրությամբ խնդրել է դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 24.02.2014թ. կայացված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. ՀՀ գլխավոր դատախազության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 11.03.2014թ. N 07/032-428 գրությամբ դիմել է ՀՀ գլխավոր դատախազությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 28.02.2014թ. «Յասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազությունը 17.03.2014թ. N 44/7-1-14 գրությամբ «Յասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Յասոն» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով մի քանի անգամ շեշտել է այն փաստը, որ գնային առաջարկը ներկայացվել է յուրաքանչյուր ապրանքատեսակի համար որպես մեկ միավորի ինքնարժեքի և անուղղակի հարկերի ընդհանրական, սակայն գնային առաջարկով ներկայացված փաստաթղթի ոչ մի հատվածում նշված չի եղել այդ փաստը:

Ի տարբերություն «Յասոն» ՍՊԸ-ի, «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մի քանի մասնակիցներ ևս գնային առաջարկը ներկայացրել են միավորի գնով, որի մասին նշել են համապատասխան սյունակում և այդ հայտերը մերժվել են, քանի որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:

Ելնելով վերոգրյալից «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը համապատասխան որոշում է կայացրել «Յասոն» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու վերաբերյալ:

3. ԳԲԽ-07/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-07/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով «Յասոն» ՍՊԸ-ի կողմից 28.02.2014թ. ներկայացված բողոքը, «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 19.02.2014թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությունը, «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Յասոն» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Բողոքաբեր ընկերություն) կողմից ներկայացված հայտը, ՀՀ գլխավոր դատախազության

(այսուհետև՝ նաև Պատվիրատու) 17.03.2014թ. N 44/7-1-14 գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ գլխավոր դատախազությունը տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որը բաղկացած է եղել թվով 33 չափաբաժիններից, և Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Յասուն» ՍՊԸ-ն:

«Յասուն» ՍՊԸ-ն 28.02.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով իր կողմից ներկայացվել է գնային առաջարկ՝ միավորի գնով՝ տառերով և թվերով արտահայտված, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի 3-րդ սյունակում նշված արժեքը ներառել է իր մեջ յուրաքանչյուր ապրանքատեսակի մեկ միավորի ինքնարժեքի և անուղղակի հարկերի ընդհանրականը, սակայն Պատվիրատուն Ընկերության կողմից ներկայացված յուրաքանչյուր ապրանքատեսակի մեկ միավորի արժեքը ընդունել է որպես յուրաքանչյուր ապրանքատեսակի ընդհանուր գին:

Բողոքաբեր ընկերությունը նշել է նաև, որ ՀՀ գլխավոր դատախազությունը, հաշվարկ կատարելիս, «Յասուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված յուրաքանչյուր ապրանքատեսակի մեկ միավորի արժեքն ընդունել է որպես յուրաքանչյուր ապրանքատեսակի ընդհանուր գին և 24.02.2014թ. որոշման համաձայն 32 չափաբաժինների մասով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչել «Յասուն» ՍՊԸ-ին:

Պատվիրատուն 17.03.2014թ. N 44/7-1-14 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Յասուն» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով մի քանի անգամ շեշտել է այն փաստը, որ գնային առաջարկը ներկայացվել է յուրաքանչյուր ապրանքատեսակի համար որպես մեկ միավորի ինքնարժեքի և անուղղակի հարկերի ընդհանրական, սակայն գնային առաջարկով ներկայացված փաստաթղթի ոչ մի հատվածում նշված չի եղել այդ փաստը:

Միաժամանակ հայտնել է, որ ի տարբերություն «Յասուն» ՍՊԸ-ի, «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մի քանի մասնակիցներ

ևս գնային առաջարկը ներկայացրել են միավորի գնով, որի մասին նշել են համապատասխան սյունակում և այդ հայտերը մերժվել են ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետին համապատասխան:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի Հրավերի N 2 հավելվածով՝ գնային առաջարկով, սահմանվել է, որ գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ ձևով՝ ապրանքի անվանումը, արժեք, ԱԱՀ-ն, առաջարկված գինը տառերով և թվերով:

«Յասուն» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած գնային առաջարկով սահմանվել է, որ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից տրամադրված «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն գնային առաջարկով նշված գների:

Հանձնաժողովի 19.02.2014թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 5-րդ կետով հանձնաժողովը որոշում է կայացրել ներկայացված գնային առաջարկի հիման վրա նախնական տվյալներով NN 1-15 և 17-32 չափաբաժիններով 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Յասուն» ՍՊԸ-ին:

Այնուհետև Հանձնաժողովը 24.02.2014թ. պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությամբ վերը նշված չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Յասուն» ՍՊԸ-ին ճանաչել է որպես ընտրված մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:

Գտնում ենք, որ Հանձնաժողովի կողմից «Յասուն» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ից 15-րդ և 17-ից 32-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու գործընթացն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ, քանի որ «Յասուն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկում 1-ից 15-րդ և 17-ից 32-րդ չափաբաժիններով գնման ենթակա ապրանքատեսակների մասով ներկայացված գները հանդիսացել են Ընթացակարգի տվյալ չափաբաժիններով ներկայացված նվազագույն գնային առաջարկ, իսկ Բողոքաբեր ընկերության կողմից գները ապրանքի միավորի գնով ներկայացված լինելու վերաբերյալ գնային առաջարկում որևէ նշում չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ ՀՀ գլխավոր դատախազության կողմից տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 24.02.2014թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու պահանջի վերաբերյալ «Յասուն» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին 28.02.2014թ. ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք մերժել այն:

Պետի տեղակալ

Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ

Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի պետ

Ա. Հակոբյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-07/14 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար

Լ. Հովակիմյան